

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիտ	համար
արեկա	12 ֆր.
վեցումայ	7
Արսասահմանի	
համար ստեկան	15 ֆր.
վ. ցամախ	8
Ավերիկայի	համար
սարեկան	3 սլ.
վեցումայ	1.50

Խ. Անուցուցե՛ք տղր և ուսցի՛ն երեսի՛ն համար 40 սանթիլ իսկ վերջին երեսին համար 20 սանթիլ է. երեսին և էլի սեղաններու համար 20 0/0 զեղջ կրուայ:

Վաճառի համար ձեռքի 10 սանթիլ է

# ՉԱՐՔՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ, ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵՂԱՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРИЯНЪ

Նամակ և ցրտի զի կիչ խոխարուրանս հասցիք

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjourn" Varna (Bulgarie)

Պուշկարիտի համար ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրուիրիկ և ս չեկ սրուիր

ՉԱՐՔՈՒՄ-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԲ Է ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

## Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿՍՏԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱԸ ԽԱՆՈՐԵԱՆ ԱՕՏԻՄ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնելի փափաքողները կրնան իրեն գրիմել Ձար-Պորիս փողոց Վառնա

### ՆԱՍԱԿԱՏՈՒՓ

2. Գեղամեան. — Ձեր պահանջած թիւ 802 «Նարմուտ» ժամանակին զրկած ենք, բայց թերթը ետ եկած է. հասցէի անբաւականութեան պատճառաւ: Կր խնդրենք կրկնէք ձեր հասցէն աւելի որոշ կերպով, որպէս զի կրկին ուղարկենք: Հայ Մայր մը. — Ձեր յօդուածը յաջորդ թուով:

## ՏԻՈՒԻ ԵՐԵՒՈՅԹ

Կովկասահայ թերթերը ժամանակէ մը ի վեր, սկսած են արձանագրել բազմաթիւ ընդհարումներու գէպքեր, որոնք սեղի կունենան ոչ թէ թաթարներու և հայերու միջեւ, այլ հնչակեաններու և դաշնակցականներու մէջ: Այդ թերթերուն գրածին համեմատ սոյն երկու կուսակցութիւնները իրարու հանդէպ այն դիրքը առած են, ինչ որ ունի թաթարը կովկասահայուն հանդէպ: Գիւղեր պաշարել, խմբային կռիւներ մղել իրարու դէմ, զիրար գերի լռենել, սպաննել ի հարկէ. վերջապէս ամէն ինչ որ կարելի է երեւակայել զինեալ երկու թըշնամիներու միջեւ:

Հայ-թրքական ընդհարումներու ատեն այդ կուսակցութեանց ցոյց տուած կորովն ու գործունէութիւնը, ամբողջ ազգին համակրութեան արժանացած էր, և ահա ճղճիմ պատրուակներու տակ կատարուած եղբայրասպան գէպքեր կուզան նստմացնել այդ համակրութիւնը:

Իրողութեանց ամենէն տխուրն ու ցաւալին է ասիկա, և դառնօրէն կը հաստատէ այդ կուսակցութեանց մէջ կարգապահութեան բացարձակ պակասը: Զանազան խումբերու պետեր, մրկրտուած «հարիւրապետ», հազարապետք եւն թիչ մը շողջողուն ու սնամէջ տիտղոսներով, պաշտոն ունենալով հայ թաթարակար դէպքերու ատեն պաշտպանել ու ինքնապաշտպանութեան մղել ժողովուրդը, գացած հայ զիւղերուն կամ քաղաքներուն մէջ կատարեալ պատուհաս գարձած են: Անոնք փոխանակ իրենց յանձնուած գործով զբաղելու և ժողովրդին պաշտպան հանդիսանալու, ինչ որ իրենց պարքն էր, զիւղերու մէջ ալ կուսակցական սնամէջ փրօփականտա ընելու սկսած են, և հակառակորդ կուսակցութեան փրօփականտին բազիւնուն պէս, խօսքէն սկսած են վէճի գրիմել: Եղբայրասպանութիւնը իր շարաշուք թեւերը այս անգամ լայնօրէն տարածած է մեր վրայ:

Սղատական գործ ըսելով, ուտիկանական ամենազտոտ արարքներ կատարելու ելած են մեր յեղափոխական խումբերը. խուզարկութիւն տուններու մէջ, ձերբակալութիւն, բանտարկութիւն, եւն: Ոչ ապաքէն յեղկուսակցութիւն մը առժամանակեայ կառավարութիւն մըն է: Անշուշտ գծաբախ գէպքերու ատեն զանազան շահատակութիւն ընող մարդիկը պատժելը յանցանք մը չէ: Իայց այդ պատրուակին տակ, հակառակորդ կուսակցութեան մը պատկանող անհատներ խոշտանքել կամ բուսննելը ամենէն ազտոտ արարքն է: Երեւանէն թղթակցութիւն մը զոր «կայմաէն կարտատպենք, յոտակօրէն կը բացատրէ այս տըխուր երեւոյթին պատճառը, որ կոյր եսութիւնը, ինքնահաւանութիւնն ու նախանձն է: Իաշնակցականները չեն ներեր որ իրենց մէկ անդամը հնչակեանի մը ձեռքով պատժուի, ոչ ալ այս

վերջինները թոյլ կուտան որ հակառակորդ կուսակցութեան «առժամեայ ոստիկանութիւնը» իր մէկ անդամը պատժէ: Ասիկա պատճառ կը լլայ զինուած կռուի, կովկասի շատ մը տեղերուն մէջ լարուած դրութեան մը ստեղծումին, պատրաստ ամենաշնչին առթիւ մը արիւնալի միջադէպեր յառաջ բերելու, որոնց նմանը արդէն պատահեցաւ: Խնձորեսկի, Կարսի, Ալեքսանդրօպօլի և ուրիշ տեղերու մէջ:

Թողով որ կովկասահայ թերթերը իրենք խօսին այդ մասին, կը հրաւիրենք հայ հասարակութիւնը որ ամենալուրջ ուշադրութիւն դարձնէ այս երեւոյթին վրայ, որ շատ տխուր հեռապատկեր մը նշմարել կուտայ: Եւ թէ կրնայ, միջոցներ գտնէ այդ կուսակցութեանց վարչներուն վրայ պէտք եղած սպիտակութիւնը ի գործ դնելու, որպէս զի զսպան իրենց «հարիւրապետներ» ու «հազարապետներ» անարգ եղբայրասպանութիւններ կատարելէ ինչ պատճառով ու ինչ հանգամանքի մէջ ալ լլայ:

ՇԱՅՄ

## ԳԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒ ՊԱՏԵՐԱՉՄԸ ԽՆՉՈՐԵՔԻ ՄԷՋ

1906 թ յունիս 27 ին 2. Յ. Դաշնակցութեան Սիւնիքի Կոմիտէի ժամանակաւոր քննիչ Մ. գնում է Խնձորեսկ և պահանջում Խնձորեսկեցիներէ 3500 ր. զէնքի՝ Փօնդի համար: Նրանք միանգամայն հրաժարուում են, պատճառաբանելով, որ Խնձորեսկի հասարակութիւնը, բացի 30 տնից՝ Հնչակեան է: Մ. դառնում է ժողովրդին հետեւեալ խօսքերով. «Ժողովուրդ, դուք գիտէ՛ք ինչ է դաշնակցութիւնը դուք տեսել էք նրա ոյժը... Ասում եմ ձեզ՝ մինչեւ փետրուարի 15 ր պատրաստեցէք այդ 3500 ր. եւ ձեր յօտար կամքով յանձնեցէք ինձ, հակառակ զէպքում ստիպւած կլինեմ դաշնակցութեան ոյժը ցոյց տալ ձեզ, կամ պիտի 3500 ր.

տաք եւ պատկանէք մեր կազմակերպութեանը, կամ պիտի թուրքանաք եւ կոտորէք իմ ձեռքով: Ժողովուրդը ակնաջ չդնելով՝ միաբերան հրաժարում է կրկին, իսկ Մ. իւր զինուորների հետ, սպանալիքներով հեռանում է գիւղից: Վերադառնալով Գորիս Մ. խնդրեւ եւ եթ հրահանգ է տալիս իրենց զիւղական ներկայացուցիչներին զինուորական կազմով ներկայանան Ալղուլի հայաբնակ գիւղում:

Հրամանը կատարուում է, 8 զիւղից (անուները բաց ենք թողնում, խմբ) հաւաքուում են Ալղուլի 300 ձիււորներից աւելի զինուորներու նախաձայնից յետոյ «զինուորական բանակ» համանաւորը հրամայում է բարձրացնել կարիքը դրօշակը «Ման կամ ազատութիւն» «միութիւն» մակագրով շարժել զէպի Խնձորեսկ, «Յաման-եկաւ ջան ֆէղան» եւ ՊԵՆՔ անկեղծ զինուոր ենք բրգերը երգելով... Իսնակը կանգ է առնում ու զիդ Խնձորեսկի դիմացը, գերեզմանոցում:

Երբ զիւղից նկատուում են այդ բազմաբազմաբան, մի բոպէ կարծում են թէ պաշարած են թուրքերով: Սակայն դրօշակից իմացում է, որ զիւղը պաշարած է, հայ «ֆէղայի» ներով: Մ. ի սպանալիքը քամի չէր. Հնչակեան ներկայացուցիչը նոյնպէս հրամայում է իւր զինուորներին զինել եւ պատրաստ մնալ: Մի եւնոյն ժամանակ «բանակի» հրամանատարի մօտ ուղարկում է 8 հոգուց բազկացած մի պատգամաւորութիւն, առաջարկելով՝ դրօշակը իջնցնել եւ մարդիկ ուղարկել գիւղը բանակցելու եւ բացատրելու: Բայց հրամանատարը հրամայում է ձեռքը պատգամաւորներին եւ թափել զիւղի վրայ: Գիւղից հաւաքած դազանակաւորները վրայ են հասնում խումբ դրօշակը եւ պատտուում, հասնում են նաեւ կանայք եւ միասին սկսում են խիստ ձեռքը եւ զինաթափանել, երբ դազանակի մի հարածով ձիուց վայր են գլորում «հրամանատարին», մեր ֆէղայիները սկսում են զալպ տալ զէպի գիւղը, որի ժամանակ սպանուում է մի 14 տարեկան պատանի եւ վիրաւորուում են երկու հոգի գիւղից, նրանց հրացանաձգութեանը գիւղից պատասխանում են նոյնպէս հրացանաձգութեամբ: Դաշնակցականներին սպանում է մէկը, վիրաւորուում երկուսը եւ սպանում նոյնպէս 5 մի:

Հնչակեանները աշխատում են զուր տեղը արիւն չթափել այլ միայն զի-

նաթափ անելու նրանք գերի են վերցնում 77 ձի եւ 40-50 մարդ...

Հնչակեանները եւ դաշնակցականները...

Սպասուում է մեծ կոտորած : Ճանաչի՛ր, ժողովուրդ, կեղծ բարեկամական դիմակով ծածկւած զոթ թշնամիներին :

«Բանուորի Ձայն»

ԵՂՐԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՊՐԵՐ

Երեւան, 15 սպրիլ

Հնչակեան եւ դաշնակցական կազմակերպութիւնները մէջ այս տեղ տեղի ունի լարւած դրութիւն : Մի հանգամանք, որ քիչ անհանգստութիւն չի պատճառում ժողովրդին...

Թէ ինչով են պարագայ մեր ազգի բնակիչները մասին մտածող այդ փաստերը...

Ազատագրական գործ ասելով, դրանք հասկանում են երեւի այն պոլիցիական կամ ժամտարմայական ծառայութիւնները...

Սրանք էլ փոխադարձը միաներին : Ահա այսպիսի մանր մուկեր հաշիւներին...

Ոչ մի բարոյական կապը չի մտնում այդ երկու կազմակերպութիւններին իրար մօտ...

Որ դաշնակցութիւնը միշտ մըստեղ է Հնչակեան կուսակցութեան գոյութիւնը...

Այո՛, գրում ենք, դեռ քաջուում էլ ենք անելի գրել, որովհետեւ եթէ բիրտկրատիան խօսքի ազատութիւնը...

բունցքով եւ խնջարի ծայրը ցոյց տալով, Կուսակցութիւնը չէ մեղ համար...

Բաւական է, պարոններ, բացատրեցէք խնդրեմ, ի՞նչ է ձեր գործը, ինչի՞ համար է ի՞նչն է ձեր սկզբունքը...

«Կայծ»

ԱՂԵՔԱՆԴՐՈՒՄ ԶԱՅԵՐԸ

(-o-)

Ժամանակէ մը ի վեր եզրիպատահայ թերթերը դարձեալ սկրսած են յուզել երբեմնի «սահմանագրական պայքարը»...

Մեր ընթերցողները խնդրին ծանօթացնելու համար կամփոփենք հոս եզրիպատահայ թերթերուն մէջ այս առթիւ տրուած տեղեկութիւնները :

Ապրիլ 29ին չիբրակի օր հասարակութիւնը մեծ թուով հաւաքուած էր եկեղեցւոյն բակը սպասելով պատարագի աւարտման :

ՍՕՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ

Ընկերու Յ. ԱՂԱՍԷՐԻՆ

(Շար. նախորդ քիւիսն եւ վերջ)

Յայտրէ առաւօտ վաճառանոցիս մէջ նստած միտքս կը տանջէի, գէթ ես իմ պոչս ազատելու միջոց մը գտնելու համար...

անկարելի չէր : Դատարանի դրան առջեւ փոքրիկ, ազատ սրճարանի մը մէջ միշտ նստած են մարդիկ...

Տակաւին այս մտառանջութեան մէջ էի, երբ ոստիկան մը անհետիւց տոմսակ մը յանձնեց :

րած էին 12 ոսկիի դրամագլուխին վրայ թշուառականը վերջապէս կընդունէր առաջարկուած միջոցը...

Այս անգամ ալ աս տարբեր երգ կ'երգէր Յայտնեց որ գործը արդէն հարցաքննիչ գատաւորին յանձնուած էր...

միջապէս փախցնելու հասարակութեան առջեւէն և այս նպատակաւ, հակառակ սովորութեան...

առաջնորդարանին դուռն ալ փակ պահուած էր : Այդ միջոցին սեղանին վրայ կը բարձրանայ ներկաներէն պ. Միհրան Տամատեան...

Ամբոխը քաղաքին մէջ, հայ նուագախումբին առանորդութեամբ, երկար պայույտ մը ընելէ յետոյ կը ցրուի :

հաղորդեցի, Գանի մը բուլէ անբարբառ մնաց և երբ վերջապէս բարձր բացուեցաւ, փոխանակ պատասխան մը տալու...

Չորս օր ամբողջ լուր չեյաւ գործէն եւ Առաքելը բանտէն տոմսակ տոմսակի ետեւէ կը զրկէր իր աւերող մաղձը իմ վրաս թափելով...

ԳՍԼՖԱԵԱՆ Ի ՊՈՒԻՐԷԾ

Մեզ ծանօթ գերասան պ. Գալֆայանի Ժամանակահատվածում...


Սեյր և Տրկին Գալֆայանները թէպէտ Լիբիքի մէջ հայերէն լեզուով տուած ներկայացումը...

Պ. Գալֆայան ներկայացուց «Համլէթ» երեք ամենագլխաւոր տեսարանները...

Սիրկ. Գալֆայան ևս իր շնորհալի ու գիւրաթեք շարժումներով...

Պրոֆ. Գալֆայան, պ. Գալֆայանները, Ֆրանսերէն լեզուով արտասանեց «Համլէթ» մենախօսութիւնը...

Պարտէ կը շնորհաւորենք Տէր և Տրկին Գալֆայանները իրենց ցոյց տուած տաղանդին...



Մօլլան, իր վկաները Առաքելը ամենքն ալ հոն էին երբ ներս մտայ Այս անգամ Առաքելը ամբողջով վրայ բազմած էր...

Կարճատու հարցաքննութիւնը վերջանալէ յետոյ, հարցաքննիչ դատաւորը...

Տ Ո Ւ Ս Ա Ն
Ռ ՈՒՍՈՒԿԱՆ ՄԵՍ ՕՐԸ

Տումար բացումը ապրիլ 27 ին տեղի ունեցաւ Կայսր և երկու կայսրուհիները...

Գալֆայան և Նէվայի վրայ գրեւորուած բոլոր նաւերը գորշակներով վարդարուած էին...

Ծրագրի համաձայն, ձմեռային պալատան մէջ հանգիստոր կերպով կարգացուած է գահաճառը...

Ծարը բաւական մտածկոտ էր, սակայն յստակ և կտրուկ ձայնով կարգաց գահաճառը...

Նկատելի էր, երկարատեւ կրօնական արարողութեան ժամանակ, երեսփոխաններէն շատերը իրենց երեսը չեն խաչակնքած...

Պայն ջանքերը որ կրնամ հայրենիքի երջանկութեան համար, նախախնամութեան կողմանէ ինձ յանձնուած...

Երբ խնդրեց որ պտէ մը դուրս ելնէք, Դուրը միջանցքին մէջ հոծաէֆէնտին ժպտալի բարեւոյ մը...

Մօլլան, գնա աղօթքը ըրէ որ ինձի պէս բարի մարդու մը հանդիպեցար, թէ չէ գիտե՞ս ինչ կըլլար վիճակդ...

Առաքել սանտրի անունը լսելուն թէ և ցնցուեցաւ ու քայլ մը ետ գնաց, բայց և այնպէս խոստացաւ այդ նուէրն ալ ը՛նել...

նակցել օրէնսդրական մեծ գործին և Ռուսիոյ փայլուն ապագային վրայ հաւատքս մեծ է և այս հաւատքով արժարձուած, իմ հրամանովս, իմ անդին հպատակներուս միջէն ընտրուած ամենաբարի անձնաւորութիւնները կընդունիմ ձեզ և կը շնորհաւորեմ...

Ես իմ հիմնած հաստատութիւններս անդձ պիտի պահեմ, հաստատապէս հաւատացած ըլլալով թէ դուք հայրենիքի սուրբ գործին համար ձեր բոլոր ճիգը թափելու էք, գիւղական բնակչութեան պահանջները ճշգրիտ պիտի բնորոշէք...

Նուաճ իրաւասութեան վրայ Տար որ Աստուած լսեր իմ բարեմաղթութիւնները, երջանկ տեսնէի իմ ազգը և իմ գահաճառանց զաւկիս կարենայի ձգել զարգացած և լաւ կազմակերպուած կառավարութիւն մը...

չափ որ կայելի է թարգմանել ան. թարգմանելի հրաշակերտ մը:

Պիտանիով որ, ըստ իր վկային՝ ամբաստանեալը հոծաէֆէնտին մօրուքին համար միայն աղտոտ է քսեր է ինչ որ խակպէս հայհոյութիւն չի կրնար համարուիլ և միւս կողմէ նկատելով որ ամբաստանիչին վկաները թէեւ նախապէս ոստիկանութեան առջեւ կը վկայէին թէ խանութեան Առաքելը հոծա Հասան էֆէնտինի մօրուքին հայհոյած է, սակայն ետքէն իրենց արդարացի յուզումը հանդարտելով և յիշողութիւնին աւելի պարզուելով հարցաքննիչ դատաւորին առջեւ իրենց նախկին վկայութիւնը սրբագրելով վկայեցին որ ամբաստանեալը ամբաստանիչին ոչ թէ ամբողջ մօրուքին, այլ մօրուքին միմիայն մէկ թելին հայհոյած է:

Նկատելով որ ամբաստանեալը հայհոյածը արտաբերելէն անմիջապէս յետոյ նախատեսալի արդարացի դայ...

Ձեռք ձեռքի տուած, սկսեցէք այն գործի, որու համար կանչեցի ձեզ, և ձեր ծարին ու ազգին վստահութիւնը արդարացուցէք: Թող Աստուած զիս և ձեր ամենքը պաշտպանէ:

Ձմեռային պալատի, և կոստաւարսդ վէննա Տումայի գումարուածներու յաակացեալ Թավրիկեան պալատի միջեւ գտնուած ճամբու երկայնքով, այս ուսական Տեծ օրի ծագումէ յուզուած խանուած բազմութիւնը երեսփոխանները շտեմուած ցնձութեամբ կը բարեւէր:

Կէսօրէն վերջ ժամը 4 ին Կալիֆան փողոցին մէջ մարդկային հեղեղանման հոսանք մը կը գոյանար որ երեսփոխանները կը ծափահարէր և մոլեգնաբար կը կանչէր «պահանջեցէք ընդհանուր ներուժ»:

Տումարի պալատան մէջ հանգիստաւոր կրօնական արարողութեան մը օտքը երեսփոխանները իրենց տեղերը անցան: Դիւանագիտական օթեակը և միւս օթեակները լիփլեցուն:

Ճիշտ ժամը 5 ին, Կոստաւարսդ վէննա Սավէդի փոխատեան պետը մորիչ, կը բազմի նախագահական թիկնաթոռը, և լուսթիւնը հաստատելու հնչակը զարնելէ ետքը, Կոստաւարսդ վէննա Սավէդի ատենագրին կը հրամայէ կայսերական հրամանագիրը կարդալ, որով մորիչին պաշտօն կը յանձնուէր Կոստաւարսդ վէննա Տուման բանալ:

Ասկէ անմիջապէս ետքը մորիչը հետեւեալ բանախօսութիւնը ըրաւ: «Երջանկ եմ որ ուսուցչի ընտրեալները կը բարեւեմ: Կայսեր կամեցողութեան համաձայն, պարտենք, ձեր ամենուն վիճակուած է մեծ պարտական...

րոյթին հետեւանօք իրեն արժանի պատիժը արդէն մասամբ մը կրած է:

Նկատելով որ այդ պատիժը տրուած միջոցին ըստ ամենայն հաւանականութեան մօրուքին հայհոյած թելը կրնայ փրթած ու ինկած ըլլալ, որով բնականաբար հայհոյութիւնն ալ նետը միասին ինկած կըլլայ:

Նկատելով վերջապէս որ ամբաստանեալը քանիցս աչքերը անկեղծ զղումի արցունքով լեցուած և պաշտազին ներողութիւն խնդրած է ամբաստանիչին և հոծաէֆէնտին ալ իր նուիրական աստիճանին և առաքինագրող անձին վայել զթարսուութեամբ ներել կուզէ:

Նկատելով որ ամբաստանեալը հայհոյածը արտաբերելէն անմիջապէս յետոյ նախատեսալի արդարացի դայ...

նոր թիւն մը

Կոստանտնուպոլսէն Տումայի հիմնական օրինագծին տնօրինութեանց համաձայն, որոք կատարեալ ազատութիւն ունի կատարութեան բարելաւման համար աշխատելու, որովհետեւ խօսքի կատարեալ ազատութիւն կը վայելէ ի դիմաց ընդհանուր ազգին, իսկ այս վերջինս ձեր գործերը պիտի իմանայ մամուլէն: Ասկէ ետքը միւրիւր ժողովը բաց հռչակեց և կարգաց երեսփոխաններու կողմէ ստորագրուած երդմագիրը:

Ասկէ ետքը տեղի ունեցաւ նախագահին ընտրութիւնը: Պրն. Սէրկէյ Մուրոմցեյը, Մոսքովայի երեսփոխան, սահմանադրական—ազատական, նախկին ուսուցչացետ, 436 ձայնէն 426 ձայն շահեցաւ: Այն անձնուորութիւնները որ ստացեր էին մնացած 10 ձայնը, իրենց ընտրելիական իրաւունքէն վազ անցան, և պրն. Մուրոմցեյի ընտրութիւնը միահամուռ ընդունուեցաւ:

Պրն. Մուրոմցեյը նախագահական տիտուր անցաւ և ի վերի երեսփոխան Բէգրունգէյի տուաւ խօսքը: Բէգրունգէյի ճիշդ հետեւեալ բանախօսութիւնը ըրաւ. «Համոզումի պարտականութիւնը, պատուոյ պարտականութիւնը մեր վրայ պարտք կը դնէ յարգել այն ամենուն յիշատակը, որ ինկան (Ռուսիոյ) ազատութեան համար (մոլեգին ծափահարութիւն): Մենք ահարկու վայրկեան մը անցուցինք, սակայն կը յուսամ որ ասկէ վերջը Ռուսիոյ մէջ արիւն չպիտի թափուի (անհատ ծափահարութիւն): Ազատ Ռուսիան, կուզէ բոլոր անոնց ազատութեան համար (ծափահարութիւն):»

Ասկէ ետքը նախագահ Մուրոմցեյը խօսեցաւ: Ընտրողներու կը յայտնեմ իմ խորին շնորհակալութիւնը: Ինձի պարտականութիւն համարեցի որ արտօնեմ այսօր ազատութեան օրը, ամենէն առաջ ազատութեան խօսքեր լսուիլ, խօսք տալով Բէգրունգէյի խօսքը աւարտելով նախագահը ըսաւ: Մենք պիտի յարգենք սահմանադրական ինքնիշխանութեան առանց նախորդութիւնները, և ճումարի իրաւասութիւնները միաձայն պիտի պահանջենք, որոնք անոր էութենէ և օրէնքներէն կը բխին:

Ասկէ ետքը նիստը վերջացաւ: Երեսփոխաններու դուրս ելած ժամանակ խուռներամ ամբողջ կեցցէի ազազակներով դիմաւորեց երեսփոխանները և ընդհանուր ներուձն պահանջեց:

ՆՈՐ ՍՍԱՑՈՒԱՄ ԳՐԳԵՐ Եւ ՀԱՆԴԵՍՆԵՐ

«Կոստանուպոլս», հանդէս եռամսեայ հրատ. բրոք. Գալֆայեան. — Եւ զեղարուեստին նուիրուած ընտիր հանդէս մըն է սա երկղեղուեայ, հայերէն եւ ֆրանսերէն, որուն երկրորդ թիւը լոյս տեսած է, Հանդէսին նըպատակն է հայ գեղարուեստը ծանօթացնել Եւրոպայի: Առ այժմ «Կոստանուպոլս» ընդգրկած է լատերական եւ մանաւանդ երաժշտական գեղարուեստը. երկու ճիւղերը արուեստին որոնց մշակման, ծաւալման ու զարգացման համար, մեր մէջ շատ նուազ եղած են մշակները, երկար ժամանակներէ ի վեր, Նիկէ «Կոստանուպոլս» շոյի հայ երաժշտութեան նոր զարկ մը տալ, մշակել, ազնուացնել, կատարելագործել մանաւանդ մեր կրօնական երգեցողութիւնները, իրաւամբ լաւագոյն ծառայութիւն մատուցած պիտի ըլլայ հայ գեղարուեստին:

«Կոստանուպոլս» ներկայ թիւը կը պարունակէ «Ինչ հարեանց պատկազիր» ժողովրդական երգի նօթագրութիւնը, ինչպէս նաեւ գրաբառ «Հայր մեր» նոր մէկ եղանակ նօթագրուած Գառնիկ Փարթմանէն եւ Սեզար Ֆրանքի «Արիւն» կտորը, նաեւ թուրք թատրոնի վրայ ուսումնասիրութիւն մը:

Սիւմանթո, «Հայրերի ներք».— Անուն մը որ յանձնարարութեան չի կարտիր, այնքան ծանօթ ու այնքան սիրուած է արդէն, իբր ժամանակակից հայ գիւցազներգութեան պեղը: Ներկայ գրքովը կը պարունակէ հինգ երգեր «Կարեւոր վերջ», «Փռուք ահարեկիչներուն», «Կովկաս», «Մենախօսութիւն» եւ «Ատենութեան կոչ»: Ինչքն ալ իխանդավառութեամբ, անհուն երեւակայութեամբ ու իսկատիպ պատկերներով, որոնք Սիւմանթոյի բնորոշ հանձարին կնիքը կը կրեն: Գիրքը 50 սանդիւմ: Դիւնի Դրօշակի խմբագրութեան:

«Հայկական Միութիւն» Փարիզի.— Ստացած ենք յիշեալ ընկերութեան կանոնագրութիւնը: Իր գործունէութիւնը խիստ լայն գիծեր ունի կանոնագրին մէջ, ցունկալի է որ իրականութեան մէջ ալ նոյնքան լայն ըլլայ: քացի սովորական գործերէ, ինչպէս երկրորդներ սարքել հայութիւնը եւրոպայի ծանօթացնելու համար, օգնել տալանդ ցոյց տուող հայ ուսանողներուն, ազգային մեծ աղէտներէ արկածու աններուն համար նաեւ յիշեալ միութիւնը պիտի աշխատի Փարիզի մէջ գիշերօթիկ միջնակարգ քօլէժ — վարժապետական միջնակարգութիւնը:

Ամենէն սքանչելի ջանքն է որ պիտի կատարէ ստով Միութիւնը, եթէ միայն կարողանայ իրականացնել եւ թուրքի վրայ գրելով չի բաւականանայ:

ՆՈՒՐԱՑՈՒՈՒԹԻՒՆՔ

Տեղւոյս Աղքատասխան ընկերութեան գործադիր ժողովու Ապրիլ ամսոյ մէջ շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուիրատուութիւնները, պատուարժան ազգայիններէ. Տիարք Արմենակ Փէչիկովանեան 5 ֆրանք, Ս. Զատիկի սոթիւ. Տօթթ.

Յարութիւն Փափազեան 5 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Ուղարկեան 2 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Չօլաքեան 2 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Մայլզեան 2 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Էնկիպարեան 2 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Հաճօղեան 2 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Տէրմէնեան 2 ֆր. իր անուն անթիւ. Նիկողոս Ֆէստանեան 2 ֆր. Ս. Զատիկի սոթիւ. Յարութիւն Ծանկիւլեան 1 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Թաշճեան 1 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Գալֆայեան 1 ֆր. իր անուն անթիւ. Յարութիւն Սիմէքեան 0.50 սանթիմ իր անուն անթիւ. Գէորգ Հալաճեան 1 ֆր. նուիրեց. Մուրատ Մանուկեանի սրճարանի դանձանակէն 11 ֆր. 50 սանթիմ. Գրիգոր Միքայէլեանի սրճարանի դանձանակէն 10 ֆր. 75 սնթ. Գումար 50 ֆր. 75 սանթիմ:

Ի զիմաց Գործադիր ժողովոյ: Ատենագիր Վ. Ատենագետի Ա. Զարպանէլեան Գ. Սիմոնեան ՎԱՌՆԱ, 30 Ապրիլ 1906

«Կ Ո Ւ Ն Կ»  
Հանդէս գեղարուեստական (Երաժշտութիւն, ճարտարագետութիւն, եւն)  
(Իրամսեայ)

«Կոստանուպոլս» նպատակն է  
1. Հայ արուեստը ճանչցնել հայուն.  
2. Եւրոպ. արուեստը ճանչցնել հայուն.  
3. Հայ արուեստը ճանչցնել եւրոպային:  
«Կոստանուպոլս» տարեկան բաժնեգրին է  
Եւրոպայի համար 10 ֆրանք  
Ռուսիոյ » 2 դալեր  
Ռուսիոյ » 4 ռուբլի  
Անգլիոյ » 8 շիլին  
Տաճկաստանի » 50 դահիկան  
«Կոստանուպոլս» օրինակ մը իբր նմուշ ձրի ստանալու համար պէտք է գրել հետեւեալ հասցեով  
Գ. Բրօքէսէօր Գալֆայեան  
Տիրէթթէօր-Ռէտաթթէօր «Կոստանուպոլս»  
159, պուլվար Մօնթարնաս  
Բարիզ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Բ. Դրան հասած լուրերը կը հաւատեն թէ՛ Գիւրտերը Կեսարիոյ մէջ շարդեր են հայերը: Մանրամասնութիւններ կը պակսին. այսու կը հաւատեն թէ սպաննուածներու թիւը 60 ի կը յանգի:

— Անգլիոյ արտօքին գործոց նախարար Կրէյը, երեսփոխանական ժողովի մէջ յայտարարեց թէ՛ Անգլիան երբէք չպիտի ընդունի միջազգային յանձնարար մը յանձնել թրքա—եգիպտական վիճելի հարցին լուծումը:

— Մովակալութիւնը լուր ստացած է թէ՛ գեր. ծովակալ Լամպտօնը երեք յածանաւով Բորդ

Սախտ հասած է:

Բ. Գուրը, ի պատասխան իւր զիական Կեսպանութեան տուած ծանուցագրին, լմացոյցած է թէ՛ թուրքա բնաւ գիտատարութիւն չունի. Սինաեան թերակղզին մէջ իրաց կացութիւնը փոփոխել. այլ միայն կուզէ իր շահերը պաշտպանել. եւ ոչ ուզի տեղեկատվական կառավարութիւնը կը վստահեցնէ թէ վիճելի երկրորդ շարժիչը չպիտի գրաւէ, Բ. Գումար որոշած է ետ քաշել իր պինդորները, իսկ այս որոշումը իմացուցած է խըտիվին, որպէս զի եգիպտական կառավարութիւնը այս պինդորներու հետ բանակցութեան մէջ կարենայ մտնել, որոշելու համար սահմանագիծը և պահպանելու իրաց վիճակը:

Այս ծանուցագրիս գրութեան կերպը որ ակնյայտի կանարգէ խըտիվը և Եգիպտական կառավարութիւնը, ինչպէս նաև վիճելի երկիրը յօշափող անցքը, չէ գոհացուցեր Անգլիական դեսպանութիւնը: Անգլիական կառավարութիւնը այս ծանուցագրին չէ պատասխանած տակաւին, սակայն կենթադրուի թէ Անգլիան իր բոլոր պահանջներու մասին գոհացում պիտի ուզէ և անօգուտ բանակցութիւններու մէջ չը պիտի մտնէ:

— Անգլիական «Բրէսէյ» անուն յածանաւը հրամանն ստացեր է Բորդ Սախտէն Սուէզ մեկնելու և մըր յաճանաւեր և սուղանաւեր Բորդ Սախտ խրկուած են:

— Պոլսոյ ալ զիական դեր հիւ. պատոս պ. Բուանը Բիքէա մեկնած է. նա, անգլիական Միջերկրական նաւատորմի ի հրամանատար լուրտ Պէլիֆորտի նաւակ մը կը տանի: Եթէ Անգլիոյ տուած վերջնագիրը անհետեւանք մնայ. կը կարծուի թէ լուրտ Պէլիֆորտը կարմիր ծովու մէջ բուռն կերպով պիտի գործէ. այս ծովակալը այն անձն է որ 1884ին քանի մը ժամուան մէջ հիմնադրական կործանեց եգիպտական ամրութիւնները: Նա այն ժամանակ «Դոնտար» անուն պղտիկ զորահանաւի հրամանատար էր, և չը տեսնուած յանդգնութեամբ մը, որ առաւպելական դարձած է՝ հասար իր նպատակին:

Մ. ԱՆԴՐԵՍՍԵԱՆ Եւ ԸՆԿ.

Ընդհ. վաճառական-Գործակատարներ կընդունուին ամէն կարգի յանձնարարութիւններ Անգլիական ու է տեսակի ապրանք համար, նմանապէս կը տրուին պատուէրներ:

Անգլի մանրամասնութեանց համար դիմել մեր մասնաւոր գործատեղին:

8-9 New Street Bishopsgate, London E. C.

Печатница на П. Глушковъ С-во Вар.